

Ակսել Բակունց

ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ

Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը
և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամ-
բարի երկու տերև՝ չոր ու գորշ, ինչպես հան-
գած մոխիր: Կռանում եմ թղթի վրա, ռունգերս
լայնանում են սուսամբարի հոտից, ու դողա-
լով թերթում եմ տետրը... Հետո պատից վերց-
նում եմ ծամի նման պիրկ մտրակը: Ես շոշա-
փում եմ մտրակը, և Ցոլակը խելոք աչքերով
նայում է ինձ, նայում է և հանդիմանում:
Ինչո՞ւ էիր մտրակում: Մտրակը դառնում է սև
օձ, որ զարկում էր ձիու ողորկ մարմնին:

Ես նորից եմ թերթում իմ տետրը, և սրտիս
վրա իջնում է անդորը: Ցոլակը կայտառ
վրնջում է, խաղացնում ականջները: Անընդ-
հատ բարձրանում ենք, անցնում առապար ու
քարափ: Քրտնած ձին մռուրը կոխում է ջրերի
սպիտակ փրփուրի մեջ և սանձերի երկաթ-
ների միջով ծծում սառցահամ ջուրը: Ինչքան
վեր ենք բարձրանում, այնքան մոտ է արևը, և
արևը խանձում է դեմք, զգեստ, ձեռք, այնքան
սառն են ջրերը, օդը ջինջ, և լսելի է ծաղիկնե-
րի մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը:

Ցոլակը վրնջում է և արագացնում քայլերը:
Ճանապարհը լայնանում է: Ահա մի արտ՝
քարե պատով: Նոսր հասկերը սսվում են լե-
ռան հովից: Գյուղը մոտ է, ձին փռացնում է
ռունգերը և խայտալով կրծում սանձը:

Ճանապարհից վերև, բլուրի լանջին, մեկը
ջրում է մուգ-կանաչ առվույտը: Ես լսում եմ,
թե ինչպես առվի ավազի մեջ գրնգում է նրա
ծանր բահը: Իսկ երբ բարձրացնում է բահը,
արևը լուսավորում է բահը, և թվում է, թե
ջրվորի ուսին բռնկված ջահ է:

— Մա՞ է Չյանբերդի ճանապարհը...

Ջրվորը բացականչում է ոչ «հա», ոչ «հո»:
Հարցս կրկնում եմ: Մարդը բահը խրում է
առվի ավազի մեջ և գալիս է դեպի ինձ: Ինչ-
քան մոտենում է ջրվորը, այնքան ավելի
բարձրահասակ է երևում: Ես նայում եմ նրա
բաց կրծքին. թվում է, թե նրա ձայնը պիտի

Aksel Bakunts*

THE APRICOT FLUTE

*Translated by Nairi Hakhverdi***

I am leafing through my travel notes and
between the pages I find two leaves of mar-
joram, dry and gray like extinguished ash. I
lean over the page and my nostrils flare at
the scent of marjoram and I leaf the journal
tremblingly... Then I take the whip, which is
tight as a braid, off the wall. I stroke the
whip and Tsolak looks at me with sagacious
eyes. It looks at me and reproaches me. Why
did you flog me? The whip turns into a black
snake that lashed the smooth flank of the
horse.

I am leafing through my journal again and I
feel a sense of serenity drifting into my
heart. Tsolak neighs cheerfully and flaps its
ears. We are continuously ascending, pas-
sing rocks and cliffs. The sweaty horse digs
its muzzle in the white froth of streams and
sucks the icy cold water through the metal
bit of its bridle. The more we ascend, the
closer the sun is, and the sun burns face, clo-
thes, and hands. The streams are so cold, the
air is crisp, and one can hear the soft
buzzing of dazzled bees in flowers.

Tsolak neighs and steps up its pace. The ro-
ad widens. Here is a field with a stone wall.
The newly grown wheat rustles in the
mountain breeze. The village is close. The
horse snorts through its nostrils and vi-
gorously bites its bridle.

Farther up the road, on the slope of the hill,
someone is watering dark green alfalfa. I
listen to the way the heavy shovel clangs
against the sand in the stream. And when-
ever he raises his shovel, the sun illuminates
it and it looks as if there is a burning torch
on the waterer's shoulder.

'Is this the road to Dzyanberd?'

The waterer neither lets out a 'yes' nor a
'no.' I repeat my question. The man plants
the shovel in the sand of the stream and
walks over to me. The closer he comes, the
taller he looks. I look at his bare chest: it
looks as if his voice should boom mightily.

խորխտ թնդա: Ջրվորը լայն ու ծանր ձեռքը մեկնում է ինձ, ասում է «մեր այքուն» ու ձեռքը տանում դեպի ճակատը:

Ամենին էլ խորխտ չի նրա ձայնը, այլ բարակ ու քաղցր: Ծերունի է. սպիտակ են ոչ միայն բեղերը և ունքերը, այլև կրծքի մազերը, որ հիշեցնում են խճճված մացառուտ:

Հարցս կրկնում եմ:

— Հա, — ասում է, — մըր գուդն ի... Իդա դար լե շրջվե... — ու գրպանից հանում է ծխախոտի քիսեն: Առաջարկում եմ գլանակ: Նա ժպտում է, կարծես ուզում է ասել, որ բարակ գլանակը նուրբ է նրա համար, սակայն վերցնում է և դնում ականջի հետևը: Ապա ոլորում է մատի չափ հաստ «ծգարան»:

— Յոնջան քո՞նն է:

Նա կուշտ ծծում է ծխախոտը, կուրծքն ուռչում է, չոր կաշվի նման ճռռում են թոքերը: Ռունգերից և բերանից ծխի քուլաները բաց թողնելով, գլխով է անում:

— Վարկայության նախակահ բերեց հերոս: Անուշ բուս է: Ինա կուտ (ցորեն) լե մեր է, — գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը: Ես դժվարանում եմ որոշել նրա արտը, բայց գիտեմ, որ ջրվորը հեռվից ճանաչում է նույնիսկ իր արտի կարմիր պուտերը:

— Մըր բախտ կապած ենք գդալ ջրի... Մըր հողեր լե ցրվուկ: Էհ, հացի տեղ արուն շատ կերանք: Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն:

Նրա ուսից կախված է հարդի տոպրակը: Տարվա այս ժամանակ նրան ինչի՞ է պետք հարդը, և ինչո՞ւ է տոպրակը ուսից կախ:

Նա ինձ պատասխանում է, որ ինքը գյուղի ջրբաժանն է և զիշերները առուների ջրերն ինքն է բաշխում մանր և ցրված հողակտորների վրա:

— Իսկ հա՞րդը:

Հարդը ջրաչափն է: Ջրբաժանը ոսկեգույն հարդը շաղ է տալիս առուների ջրերի վրա և որոշում հոսանքի արագությունը, ջրի ծավալը:

The waterer extends his broad and heavy hand toward me, says 'bless you,' and moves his hand to his forehead.

His voice is not at all mighty. On the contrary, it is light and sweet. He is an old man: not only are his beard and eyebrows white, but so is his chest hair, which reminds one of a tousled thicket.

I repeat my question.

'Yes,' he says, 'it's our village... Turn over there...' and he takes a tobacco pouch out of his pocket. I offer him a cigarette. He smiles, as if to say that the thin cigarette is too fragile for him, but takes it anyway and slides it behind his ear. Then he rolls a thick 'smoke' the size of his finger.

'Is the alfalfa yours?'

He sucks on the smoke with relish and swells up his chest. His lungs squeak like dry leather. As he lets out a stream of smoke through his nostrils and mouth, he nods.

'A respectable chairman brought it last year. It's a sweet plant. Its seed (wheat) is also ours,' and with his head he points to the rocky mountain slope where tiny wheat fields give off a green color. I'm having a hard time discerning his field, but I know that the waterer can recognize even the red dots on his field from a distance.

'Our luck is tied to watering... Our fields are spread out. Ah, instead of bread we ate a lot of blood. Now that we sow seeds, the seeds grow, and we can live again.'

A sack with straws hangs from his shoulders. What does he need straw for at this time of year? And why is the sack hanging from his shoulders?

He tells me that he is the village waterer and that it is he who distributes stream water to the small and dispersed strips of land at night.

'What about the straw?'

The straw serves as a water meter. The waterer sprinkles the golden straw on the stream to measure the speed of the current and the volume of water.

— Մուրո՛ ո... Մո՛ւ...րո՛ ո, — վերնից լսվում է մի զիլ ձայն, — ջուր խլսա՛ վ:

— Տղա լա՛ ո ...

Ծերունին առավ բահը ու վազեց վերև, երևի ջրի բանդը:

Հետո ես և Ցոլակը շրջեցինք «դարը», իջանք ձորակը, նորից բարձրացանք, և սարահարթի վրա երևաց լեռնային գյուղը՝ առանց ծառերի, առանց այգիների, օղակված կանաչ մարգագետիններով և բաց առուներով, որոնց ջրերը արևամուտին վարարում են, կեսգիշերին աղմկում խոր ձորերում, իսկ երբ արևը զարթնում է, լռում են լեռան սառույցներից իջնող այդ առուները:

Սպիտակ եզան հետ մտանք բակը: Եզը գնաց դեպի միակ դուռը, որի ճակատին փակցրած էր աղբ, աղբի վրա՝ ձվերի ներկած կճեպներից խաչ: Եզը միակ դռնից ներս մտավ, և մենք՝ նրա հետևից: Գնացինք մութ միջանցքով, ապա մի դուռ բացվեց դեպի ձախ, մթնի մեջ կորավ սպիտակ եզը, նրա հետևից՝ իմ հոգնած ձին, որ լեռների մաքուր օդից հետո անսխորժությամբ էր շնչում գոմի կծու հոտը:

Հետո միջանցքի աջ կողմը նույն հանգով երգեց մի այլ դուռ, և բոցերի լույսով, մուխի մեջ երևաց ոսկե ծամիկներով մի աղջիկ, Ազնուն, դուստրը իմ վաղեմի ծանոթի, որի տանը գիշերելու էինք ես և իմ ձին:

Ազնո, Ազնիվ... Երբ հիմա թերթում եմ իմ ուղեգրությունների տետրը, որի էջերի արանքում գտնում եմ չորացած ծաղիկներ և սուսամբարի տերևներ, ես երկա՛ր, երկար նայում եմ դաշտային թիթեռնիկի թևին, որի ոսկեփոշին փայլում է, ինչպես այն օրը, երբ մարգագետնի վրա թիթեռը ծծում էր ջրախոտի ծաղիկները: Թիթեռնիկի թևի վրա ես կարդում եմ՝ «Ազնո»... Եվ մտածում եմ, որ Ազնուն հիմա դպրոց է գնում և կտուրների վրա ջինջ ձայնով այլևս չի երգում.

*Քանց լուսին ամպի տակով,
Դու ջուր կերթաս ջուխտ դորակով:*

Եվ այլևս չի պատասխանի այնպես, ինչպես այն օրը, երբ միասին նստել էինք իրենց

'Muro-o! Mu-ro-o!' a shrill voice calls from above. 'My water has run out!'

'Okay, boy!'

The old man takes his shovel and runs up, probably to the water's dam.

And then Tsolak and I turn 'over there,' descend into the dale, ascend again, and see the mountain village appear on the plain, without any trees, without any gardens, but enclosed in green meadows and open streams whose waters flood at sunset, clamor in the deep valley at night, and fall silent when the sun awakes - those streams that flow down from the ice on the mountains.

We entered the courtyard with a white ox. The ox moved to the only door, above which dirt was pasted and, on the dirt, a cross made of painted eggshells. The ox went inside through the only door and we followed it. We walked through the dark passageway. A door opened to the left and the ox disappeared in the dark. Following the ox was my exhausted horse, which longed for the clean air of the mountains, but was unwillingly inhaling the pungent stench of the barn.

Then a door to the right of the passageway sang with the same tune and, in the light, through the smoke, a girl with golden tresses appeared: Azno, the daughter of my old acquaintance with whom my horse and I were to stay the night.

Azno, Azniv...[1] When I now browse through my travel notes in my journal, between whose pages I find dried flowers and marjoram leaves, I take a long, long look at the wings of the field butterfly, whose golden dust shines like that day when the butterfly sucked on the reed flowers in the meadow. On the wing of the little butterfly I read 'Azno'... And I think that Azno goes to school now and no longer sings with a high-pitched voice from the rooftops:

*Like the moon from behind a cloud
You fetch water with a pair of jugs.*

And no longer will she respond in the way that she did on that day when we were sit-

բարձր կտուրին, և լեռան միամիտ աղջիկը պատասխանում էր իմ հարցերին.

— Ազնո, կինո տեսե՞լ էս:

— Հաբա օրի չըմ տեսե. շուր մը զարկեր է պատ, կցուցե ձի, աղջիկ, օրիորդ, կարտոֆել:

— Կարմիր բանակ լսե՞լ էս:

— Կարմիր բանակ շուր է, քցեր են դրոշակի վրա:

— Ազնո, աստված կա՞:

— Հաբա: Աստված կանաչ ճնճղուկ է:

— Հապա երկի՞նքը:

— Երկինք զինջիլով կապուկ է եզան կոտոջին:

— Ազնո, որ մեծանաս ի՞նչ ես դառնալու:

— Կեղնիմ օրիորդ:

Ազնո, Ազնիվ...

Բոց էր բարձրանում խոր թոնրից, գվվում էր օդը սնդուի խողովակների մեջ և թվում էր, թե գվվում էր գետինը բոցերի ուժից, միսի սև քուլաներից, որ հրեղեն սյունի հետ գալարվելով՝ ձգվում էր մինչև լեռնային երկնքի սառն աստղերը:

Իմ վաղեմի ծանոթը կրակի մոտ պատմում էր ջրի և ջրբաժանության, քարոտ հողերի և հանդերի մասին:

— Ինչ եղեր է չեղեր է, գացեր է: Եղանք գոմշու կոտոջ, կպանք զիրար: Սև թոն եկավ, արուն առու ելավ: Մըր փողպատ ազատինք Մոսկանա երկրեն, մըր Տավորիկի հուղերեն: Ախ ու փախ, գիշեր-ցերեկ չփլախ, սոված, ռութ: Լենինի լոյս մեզ ազատություն տվեց: Մենակ մըր սահման նեղ է, շնորհիվ սահմանի նեղության, ժողովուրդ կնեղվի: Մըր հողերի սահման դըռ քար է, ժողովուրդի նեղություն քարից է: Մըր հոգին լե կառավարության, մըր ջան լե...

Նա հույս ուներ, որ Զյանբերդի ժողովուրդի հողերի սահմանները կլայնանան, քար ու քարափ կանաչով կպատեն, լեռան գագաթին, սառույցների տակ կկառուցեն ջրամբարներ և լեռնային լճակներ, և այլևս գիշերները ձորե-

ting together on their high rooftop and the naïve girl was answering my questions:

'Azno, have you ever seen a movie?'

'Sure I have. A cloth was hung on the wall, it showed a horse, a girl, a miss, and a potato.'

'Have you heard of the Red Army?'

'The Red Army is a piece of cloth that has been put over the flag.'

'Azno, is there a god?'

'Of course. God is a green sparrow.'

'Then what about heaven?'

'Heaven is a chain tied around the horns of an ox.'

'Azno, what do you want to be when you grow up?'

'A teacher.'

Azno, Azniv...

Fire was rising from the deep fireplace, the air was wailing through the chimney, and it seemed as if the ground was wailing under the might of the fire, under the puffs of black smoke that twirled around the fiery walls and stretched all the way toward the cold stars of the mountainous sky.

My old acquaintance was sitting by the fire and telling about the water and the waterer, about the rocky soil and the fields.

'What happened, happened, and passed. We turned into bulls and locked horns with each other. Black rain poured down and blood flowed in streams. We freed our steel collar from the land of Motkana, from our Talvorik grounds. Pain and suffering, day and night, naked, hungry, bare. Lenin gave us freedom. Only the border of our lands is too close and that bothers the people. There are rocks and cliffs on the borders of our lands. The rocks bother the people. Our souls belong to the government, and so do our bodies...'

He hoped that the lands of the inhabitants of Dzyanberd would be expanded, that the rocks and cliffs would be covered in green, and that they would be able to build reservoirs and mountain lakes on the mountaintop under the ice sheets so that the ice water

րով անպտուղ չեն հոսի սառույցների ջրերը:

Նա պատմում էր, որ գյուղի երկու թայֆաները՝ «բարակ» և «հաստ» թայֆան հետզհետե հաշտվում են, առաջանում է նոր սերունդ, որն իրեն չի համարում ո՛չ Մոտկանա երկրից և ո՛չ Տավորիկից, այլ Չյանբերդից: Եվ որ ինքը և իրեն հասակակից մարդիկ դեռ հիշում են իրենց ձորերը և դուրանը, որտեղ խոտը բարձրանում էր մինչև կովի կուրծք, այնպես, որ կովերը հորթ էին բերում խոտերի միջին, և կովի հետքով գտնում էին հորթին՝ խոտերի մեջ նստած:

— Երեկ ամպ էր, էսօր պարզ արև...

Իմ ծանոթը պատմեց այնպիսի բաներ լեռների մարդկանց մասին, որ այժմ էլ, երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցվում է կսկիծով և դառնությամբ: Նրա սերունդը տեսել է ն՝ հուր, և՛ պատերազմ, և՛ ջարդ, և՛ գաղթ: Երբ նրանք քշում էին հարավ, խփում էին և՛ հարավից, և՛ հյուսիսից: Հրդեհվում էր մի անտառ, և նրանք եղնիկների խմբերի նման, այրվող ծառերի միջից, եղջյուրներով բացում էին իրենց ճանապարհը: Նրանք քշել են արևմուտք, ապա ձիերի գլուխը դարձրել են հյուսիս և բնակություն հաստատել այս բարձր լեռան վրա:

Իմ ծանոթը պատմում էր, որ ոմանք հին սերնդից հրաժարվում էին հերկել Չյանբերդի հողերը, որովհետև նրա սահմաններում թաղված են և թուրքեր: Որ դեռ երկար տարիներ նրանք իրենց մեռելները ուսերի վրա, լեռներից իջել են դաշտի գյուղերը, որպեսզի նրանց թաղեն հին վանքերի պատերի տակ: Նա ասում էր, որ Չյանբերդում ես կտեսնեմ շատ խաչեր՝ դռան ճակատին, եզների եղջյուրներից կախ, կավե կարասների վրա, թռնրի շրթունքներին, նույնիսկ այն խրավիլակների կրծքին, որոնց ցցում են արտերում՝ ճնճուկների դեմ: Որ Չյանբերդում ապրում է մունջ Սևդոն, որը հագնում է մազեղեն կոշիկ՝ «խարուկ», ինչպես Մոտկանա երկրում, որն «իր բերնին նալ է գարկել» և չի խոսում նրանց հետ, որոնք Մոտկանից չեն:

Չյանբերդում միայն մի մարդ կա, որի առաջ

would no longer flow down at night through the valleys without fruit.

He said that the two sides in the village, 'thin' and 'thick,' were reconciling little by little and a new generation was coming into existence that neither considered itself from Motkana, nor Talvorik, but from Dzyanberd. And when the elderly are by themselves, they remember their valleys and plains, where grass grew so high that it touched the cow's udders and so high that cows would give birth to calves in the middle of the grass, and it was only by following the trace of the cow that one could find the calf sitting in the grass.

'Yesterday was cloudy. Today is bright and sunny...'

My acquaintance told me such things about the highlanders that even now, when I leaf through my journal, my heart fills with sorrow and rancor. His generation has seen fire, war, massacre, migration. When they were driven to the south, they were battered from both the south and the north. A forest was ablaze, and they, like a flock of deer, hewed their way with horns through burning trees. They were driven to the west and then they turned the heads of their horses toward the north and settled on this high mountain.

My acquaintance told me that some of the members of the older generation refused to till the land of Dzyanberd, because Turks are buried on its borders. For many years already they have descended to the field villages from the mountains carrying their deceased on their shoulders in order to bury them within the walls of the old monastery. He told me that I would see a lot of crosses in Dzyanberd: above doors, hanging from the horns of oxen, on clay jugs, around the edge of fireplaces, and even on the chests of those mounted animals that are set up in fields to scare away sparrows. He also told me about mute Sevdon, who lives in Dzyanberd, puts on his fuzzy shoes, or 'kharuk' as they are called in the land of Motkana, and who 'has nailed a horseshoe over his mouth' and does not speak to those who are not from Motkana.

There is only one man in Dzyanberd before

խոնարհվում է համառ Սևդոն: Այդ մարդը
Հազրոն է, ինչպես անվանեց իմ ծանոթը
լեռան գյուղերի ամենալավ մարդը:

Բայց մեր զրույցը խանգարվեց, որովհետև
լավեց ոչխարների մայունի աղմուկը: Ազնոն
տեղից թռավ, դուրս եկան և մյուսները, նրանց
հետ էս:

Լեռներից գյուղի վրա իջնում էին այծերի ու
ոչխարների հոտերը: Ի՛նչ աշխույժ աղմուկ
էր, ի՛նչպիսի զվարթություն, կանչեր, շան
կաղկանձ, պղնձե կովկիթների զրնգոց, Բա-
ռաչ, մայուն և հովիվների սուլոցներ: Կարծես
ավար էին բերում գյուղը, և կին, աղջիկ, երե-
խա ու տղամարդ, փողոցներից դեպի բակերն
էին քշում այծ, ոչխար, հորթ:

Իմ ծանոթի բարձր կտուրից էս նայում էի
Չյանբերդին, Արարատյան դաշտին, որտեղ
կանաչներով շրջապատված գյուղերը
հետզհետե սուզվում էին երեկոյան մութի մեջ,
և ավելի պայծառանում էին քաղաքների
կրակները:

Երբ հիշում եմ այդ երեկոն, քաղաքների
կրակները և դաշտի վրա իջնող գիշերը,
Չյանբերդի ներքևի կտուրի վրա տեսնում եմ
մի մարդու, թիկունքը դեպի ինձ, դեպի լեռան
գագաթը, երեսը դաշտի կողմը, և լսում եմ
լեռան գյուղերի ամենալավ մարդու նվագը:

Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ
խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձո-
րերը դառնում են կիրճեր և լեռների գագաթ-
ները՝ ապառաժներ: Տաք կիրճերում, լեռնա-
յին վտակների ափերին, կանաչում էր վայրի
խաղողը, և նրա որթը մագլցում էր պղնձա-
գույն ժայռերի վրա: Աճում էր և վայրի հոնը,
երբեմն թուզը: Իսկ բարձրերում, որտեղ քա-
րափների վրա ցրված էին նրանց աղքատ
հյուղակները, ցանում էին կորեկ և վաղահաս
ցորեն: Երբ հասնում էր կորեկը, ձորերից
բարձրանում էին գագանները: Մարդիկ ար-
տերի եզրին խարույկ էին վառում, որպեսզի
արջերը չտրորեն կորեկը:

Նրա մանկությանը խաղացել է այդ քարա-
փների վրա: Ինչպես ֆավն, այդ պատանին
փող է նվագել քարանձավների ստվերում, և
նրա պարզ երգերին արձագանքել են ձորերը:

whom Sevdon bows. That man is Hazro, as
my acquaintance called him, the best man of
all the mountain villages.

But our conversation was interrupted by the
noise of bleating sheep. Azno jumped up and
went outside. The rest followed, and so did I.

Flocks of goats and sheep were coming
down over the village from the mountains.
What spirited noise it was! What gaiety!
Calls, howling of dogs, clanging of copper
milking pails, lowing, bleating, whistling of
shepherds! It was as if war trophies were
being brought to the village. Women, girls,
children, young men were driving goats,
sheep, and calves to the courtyards through
the streets.

From my acquaintance's high rooftop I was
looking at Dzyanberd and at the Ararat plain,
where the verdant villages were slowly
submersing in the darkness of the evening as
city lights became brighter.

Whenever I remember that evening, the city
lights, and the descending night on the plain,
I see a man on a lower rooftop in Dzyanberd,
his back toward me, toward the summit of
the mountain, facing the plain, and I hear the
best man-made music of the mountain villa-
ges.

His homeland had been rocky Sasun, that
silent country's most silent corner, where
the valleys become gorges and the peaks of
mountains, cliffs. In the hot gorges, on the
banks of mountain streams, the wild grape
grew and its vine crept over the copper-
colored cliffs. Wild cornel also grew, and
sometimes even figs. And on the heights,
where their poor hovels were scattered over
the cliffs, they sowed millet and young whe-
at. When the millet had grown, beasts would
ascend the valleys. The people lit bonfires on
the edge of the fields so that bears would not
destroy the millet.

He had played on those cliffs as a child. Like
a faun, that young man played a flute in the
shade of those caves and his simple songs
echoed through the valleys. Sometimes it

Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն քարերն են քերծել դեմքը, ցուրտը և արևը խանձել են նրա կուրծքը, ինչպես լեռան լանջը: Նա կովել է գազանների հետ և նրանց հետ, որոնք հրացանների կրակոցների աղմուկով քշում էին նախիրը, ոչխարը, առևանգում կին ու երեխա:

Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, ինչպես իր պապերը, կցանի կորեկ, աշնանը կիջնի ձորերը, կհավաքի միրգ և ցախ, ձմեռը կլսի հին գրույցներ՝ Չենով Օհանի, Մսրա Մելիքի և Թլոր Մանուկի մասին:

Բայց պայթեց պատերազմը, եղավ գորածողով, բռնություններ, հրդեհեցին դաշտի գյուղերը, հրդեհաձիգները ձորերով բարձրացան մինչև լեռների գագաթները, մինչև նրանց խեղճ խրճիթները, հրացաններ որոտացին, և շողացին սրեր, ամպերի փոխարեն քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը: Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան և ծերպերով, քարայծի արահետներով անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ, կերավ ընդեղեն, և՛ ալուճ, և՛ մասուր, — ապա հոգնած, ահը աչքերի մեջ, գնաց հարավի կողմը, գնաց մերթ իբրև քուրդ հովիվ, մերթ իբրև քաղցած գայլ և հասավ անծանոթ մի աշխարհ, որտեղ ոչ լեռներ կային, ոչ լեռնային լույս աղբյուրներ: Շոգ հարթավայր էր, պղտոր, դեղին գետերով, որոնց ջրերի մեջ չէին երևում այն կապույտ առվակները, որ իջնում էին իրենց լեռների սառույցներից:

Նա հանեց ծիրանի փողը, այն կարմրավուն սրինգը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը, և նրա մատները խաղացին ծիրանի փողի վրա: Հազրոն շոգից խանձված շրթունքներով գրկեց փողի բերանը, ինչպես լեռնային գյուղերում ջուր են խմում կավե դորակներից: Ջրի նման գլգլում էր նրա նվագը, լեռների երգը՝ շոգ հարթավայրում:

Լաց լացեց կինը, փոքրիկ աղջիկը քնեց մոր ծնկների վրա, լացեց և Հազրոն, հետո թեթևություն իջավ սրտի վրա, ինչպես կապույտ ամպը նստում էր Մարութա բարձր սարին: Ապա

was hail that crushed him, sometimes it was rocks that scratched his face, and it was the cold and the sun that had scorched his chest like they had the mountain slope. He fought against beasts and against those who drove cattle, sheep, kidnapped women and children by firing guns.

It seemed as though he would live on those cliffs until he died and, like his ancestors, sow millet, descend to the valley in the autumn, gather fruit and firewood, and listen to old stories in the winter about Vocal Ohan, Egyptian Melik, and Tongue-Tied Manuk.

But war broke out. There was conscription and violence. The field villages were burned down and the arsonists ascended the valleys to the peaks of mountains and to their poor hovels. Rifles rattled and swords glistened. Instead of clouds, the smoke of blazing villages perched on the cliffs. The fire reached the yellowed fields and guzzled both seed and sower.

Hazro took his wife and daughter and walked from mountain to mountain and cave to cave through crevices and over chamois tracks. He ate legumes, haws, and rosehip. Then, exhausted, with terror in his eyes, he turned south, acting sometimes as a Kurdish shepherd and sometimes as a hungry wolf. Finally he reached an unfamiliar world where there was neither mountain, nor clear mountain springs. It was a hot lowland with yellow rivers in whose waters those blue streamlets that flow down from the ice of mountains were not visible.

He took out his apricot flute - that reddish fife, on which the songs of the blue mountains had been played - and his fingers started to move over the apricot flute. Hazro enveloped the flute's mouthpiece with his sunburned lips in the same way that people in the mountain villages drink water from clay pitchers. His music, a song from the highlands, gurgled like water on the hot lowland.

His wife cried. His young daughter fell asleep on her mother's knees, and Hazro also cried. Then a sense of lightness drifted into his heart, just like the blue cloud that per-

սրբեց արցունքը, ուսն առավ աղջկան, առավ կնոջը և հետ նայեց: Փոշի էր նստել հեռվի լեռների վրա, և չէին երևում իրենց բարձր լեռները:

Հազրոն ասավ կնոջը.

— Էսօր դուման է մեր լեռան վրա, վաղը նորից արև կծագի:

Բռնեցին մի ճանապարհ, մոլորվեցին հազար ճանապարհներում, հետո, երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հազրոյի քոչը ելավ այս բարձր լեռը:

Հանդարտվում էր գյուղի երեկոյան աղմուկը:

Լեռան սպիտակ սառույցները լույս էին տալիս: Մարգագետինները ծխում էին դաղձի բույր: Բարակ լուսինը դողդողում էր, և նրա լույսի տակ եզների շողիքը օրորվում էր արծաթյա օղակների նման: Դադրած եզները ննջում էին, և լուսնի տակ նրանք նման էին մարմարե արձանների:

Ներքևի կտուրի վրա հավաքվել են գյուղի հոգնած մշակները: Երեկոյան մութի մեջ նրանք ավելի հաղթամարմին են, ինչպես գեր եզները:

Ես բարձրանում եմ կտուրը:

Այնտեղ չորս փոքրիկ աղջիկներ կան և մի տղա: Մի բարձրահասակ մարդ զբաղվում է նրանց հետ: Աղջիկները հարձակվում են փոքրիկ տղայի վրա, իսկ տղան հրում է նրանց, ապա իրար են խառնվում ու զլորվում կտուրի վրա: Բարձրահասակ մարդը քրքջում է, մյուսների խոսակցությունը դադարում է, և լեռնցու բոց աչքերով նրանք նայում են երեխաների կովին: Ցավից ճչում է մի աղջիկ և վազում կտուրի վրա նստածներից մեկի, ըստ երևույթին հոր, գիրկը: Հայրը ծիծաղում է.

— Հաբա աղջիկ, գոիվ տփոնք է:

Բարձրահասակ մարդը բաժանում է մյուսներին, գրկում է տղային, որ կորյունի նման կըրվում էր հասակակից երեք աղջիկների հետ:

— Բաբեն դուրբան, հերիք, — ասում է մարդը: Իսկ տղան նրա գրկի մեջ թպրտում է, կարծես հիմա պիտի թոնի շիվար աղջիկների վրա:

ches on the high mountain of Maruta. Then he wiped his tears, lifted the girl on his shoulders, took his wife, and looked back. Dust had settled on the distant mountains and their high mountains were not visible.

Hazro said to his wife:

'Today there is fog over our mountain. Tomorrow the sun will come out again.'

They took a road, got lost in a thousand places, and then, when white hairs had already grown out of his head, Hazro found his new home on this high mountain.

The evening noise of the village was abating.

The white ice caps of the mountains reflected light. The meadows diffused the scent of mint. The thin moon quavered and under its light the snot of oxen oscillated like silver rings. The quiet oxen were dozing and in the moonlight they looked like marble statues.

The tired farmers of the village have gathered on the rooftop below. In the evening darkness they look sturdier, like fat oxen.

I go up the rooftop.

There are four little girls and one boy there. A tall man is keeping them busy. The girls attack the small boy. The boy pushes them and they mingle and roll about on the rooftop. The man laughs boisterously. The conversation of the others quiets down and the fiery eyes of the highlanders look at the children's fight. One of the girls screams in pain and runs toward one of them sitting on the rooftop - in this case, her father's lap. Her father laughs:

'But of course, my girl, it's fighting and beating.'

The tall man separates the others and picks up the boy who fought like a cub against three girls his age.

'Dear me, enough,' the man says. But the boy continues to kick in the man's grip as if he is about to jump on the dismayed girls.

Մեկը աղջիկներին պատվիրում է տուն գնալ, և նրանք փայտե սանդուղքով իջնում են ցած:

Տիրում է լռություն: Միայն բարձրահասակ մարդը զվարթ քրքիջով հանգստացնում է տղային.

— Բաբեն դուրբան, չէ՞ աղջիկ լե մեղք է...

— Մինչև էնի չզարկեր, ես լե չզարկի, — բողբում է տղան:

— Հագրո, — կանչում է նստած սովերներից մեկը, — չալե ս:

Ուրեմն այս բարձրահասակ մարդն է Հագրոն, որի մասին պատմել էր ինձ իմ վաղեմի ծանոթը:

— Խանամին, խանամին...

— Յար խուշտա...

Տղան արագ իջնում է նրա գրկից և վազում ներքև: Հագրոն մոտենում է ինձ և մեկնում ձեռքը:

— Բարի տեսանք:

Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ պղնձագույն է երևում, ճերմակ մազեր և կեռ արծվաքիթ: Նրա աչքերը փայլում են երիտասարդական ավյունով:

— Կխաղա՞ք, — նայում է մյուսներին:

Ես երբեք, երբեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը բարձր լեռան մի գյուղում: Հագրոյի տան կտուրը, նրա նվազը և հսկաների հին պարը:

Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ ավելի երկար էր մեր հովիվների սովորական սրնգից: Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դեպի գյուղի կողմը, և հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց «Յար խուշտան»: Նա սկսեց դանդաղ և մեղմ, հետո ձայները զորացան, արագացավ չափը: Հետո վայրենի կանչով վեր թռավ ջրբաժանը, կանգնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը և շուտով նրանց երկու շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով: Նվազն ավելի թնդեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրա արշավում էին բանակներ: Նրանց

Someone orders the girls to go home and they descend the wooden staircase.

Silence falls. Only the tall man with the boisterous laugh soothes the boy:

'Dear me, it wasn't only the girls' fault, was it?'

'I didn't hit her until she started hitting me,' the boy protests.

'Hazro,' someone sitting in the shade calls out, 'play!'

So, this tall man is Hazro about whom my old acquaintance has told me so much.

'Mother-in-law, Mother-in-law...'

'Beloved Hustle...'

The boy quickly jumps off his lap and runs down. Hazro approaches me and extends his hand.

'Pleased to meet you.'

He has a broad forehead that has a copper shine in the moonlight, white hair, and a curved aquiline nose. His eyes sparkle with youthful vigor.

'Will you play?' He looks at the others.

I will never, never, forget that moonlit night in that mountain village, Hazro's rooftop, his music, and the giants' old dance.

The boy brought the fife from home - that apricot flute that was only a little longer than the usual fife of our shepherds. He stood on the edge of the rooftop, turned the flute's mouthpiece toward the village, and little by little, like sunrise in the mountains, 'Beloved Hustle' awoke. He began slowly and softly. Gradually the volume grew louder and the beat hit faster. Then, with a savage yelp, the waterer jumped up and stood in the middle of the rooftop. Another man followed suit and so did a third. Soon two rows were formed that struck against each other like colossal cliffs with hands, knees, and chests. The music thuds louder. The beams of the rooftop shake. It's as if two ar-

ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բոր-բոքված աչքերից:

Հարևան կտուրների վրայից, տների բակերից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը: Երբ մի շարքը մյուսին հետ էր մղում՝ ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրիժառու լինեն ամոթի և պարտության համար:

Հազրոն նվագում էր իր ծիրանի փողը, նվագում էր նոր զվարթությամբ այն երգը, որ իբրև երիտասարդ ֆավն նվագել էր իր հայրենի քարանձավներում, այնտեղ, ուր ամպերը հյուղակներից ցածր են լողում, և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկյան բռնկվում են ձորերը:

* * *

Նրանք գնացին:

Կտուրի վրա մնացինք Հազրոն և ես: Տուն գնաց և այն փոքրիկ տղան, նրա թոռը: Լուսնի տակ ես դիտում էի նրա կարմրավուն փողը: Նա ծանր էր և կարծես ձուլված էր ծանր մետաղից: Ես բռնում էի այդ փողը գիշերային զովի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում:

Իսկ Հազրոն պատմում էր, որ իր կյանքում ամենածանր հարվածը եղել է կնոջ մահը: Աղջիկն ամուսնացել է դաշտի գյուղում: Պապի մոտ հաճախ է լինում այն փոքրիկ տղան, նրա առաջին թոռը:

Աստղերի և լուսնի տակ փովել էր Արարատյան դաշտը: Մասիսների ձյունոտ գագաթների սպիտակ ցուլը լույս էր գցում մինչև երկնքի խորքը: Հեռվում, ուղտերի քարավանի նման ձգվել էին Հայկական պարի լեռները:

— Կտեսնե՞ս էն գուղ, կրակների ձախ կողմ:

Հովվական կրակների ձախ կողմը, դաշտի վրա, երևում էր մի սև կետ:

— Հոնի զիմ նշանածն ա թաղուկ:

Երբեմն նա իջնում է լեռան գյուղից, վերցնում է չոր ցախ և կնոջ գերեզմանի գլխավերևը կրակ վառում: Նա նստում է այնքան, մինչև

mies are crashing against each other. The strikes of their hands make the sound of steel and their infuriated eyes spit out sparks.

Women and girls are watching the dance of the highlanders from neighboring rooftops and courtyards. When one row pushes back the other with slaps of the hand or a firm thump of the chest, those who are pushed back charge with renewed force to avenge their disgrace and defeat.

Hazro plays his apricot flute and with renewed vitality he plays that song that the young faun had played in his native caves where clouds drift lower than the hovels and valleys light up for a second when a bolt of lightning strikes.

* * *

They left.

Hazro and I stayed on the rooftop. The little boy, his grandson, also went home. I observed his reddish flute in the moonlight. It was heavy and looked as if it had been forged from heavy metal. I held the flute against the night breeze and it made a soft metallic sound.

And Hazro was telling that the biggest blow he had received in his life was the death of his wife. His daughter got married in the field village. The little boy, his first grandson, often stays with his grandfather.

The Ararat plain had sprawled under the stars and the moon. The reflections of the snowy white peaks of the Ararat cast their light into the depth of the sky. In the distance, the Armenian mountain range had stretched out like a camel caravan.

'Do you see that village on the left side of the fires?'

On the left side of the shepherds' fires, in the field, a black dot was visible.

'My wife is buried there.'

Sometimes he goes down from the mountain village, takes dry firewood, and lights a fire at the head of his wife's grave. He sits

հանգչում է կրակը, հետո տխուր, տխուր նվագում է ծիրանի փողը և այն երգերը, որ նվագում էր իրենց հեռու երկրում, որտեղ ինքը հովիվ էր, կինը՝ գյուղական աղջիկ: Հետո թեթև հոգով գնում է աղջկա տունը, լսում է նրա տան աղմուկը, խաղում է թռուների հետ և մենակ ճանապարհ ընկնում դեպի լեռը, դեպի լեռան գյուղի իր պարզ խրճիթը:

— Հազրո, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում:

— Մեր քարափների վրա՞: — Եվ լռում է:

— Հեյ վա՛խ ջահելություն, թռար... Եվ նորից վերցնում է փողը:

Նվագում է, այս անգամ ոչ թե լեռնականների կորովի երգը, որից բորբոքվում է արյունը, — այլ հովվական պարզ մի երգ: Կա և՛ թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:

— Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մաըրդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ չորս բուր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ-գուլալ ախպրտոց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանցրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիգա զիմ սիվտակ ոսկորներ...

— Հազրո, իսկ ո՞ւմ կտաս քո ծիրանի փողը:

— Զիմ փող կիտամ իմ քաջարժիվ թոռնիկին:

Փողոցում խաղաղություն է:

Քնել են հոգնած մարդիկ, և փողոցի լապտերների լույսի տակ օրորվում են քաղաքի տները, նրանց սև պատուհանները: Լեռներից գով է իջնում քաղաքի վրա, և գիշերային գովը

there until the fire goes out and then dolefully, dolefully plays the apricot flute and those songs that he played in their distant land where he was a shepherd and his wife a village girl. And then with a relieved mind, he goes to his daughter's house, listens to the noise in her house, plays with his grandchildren, and takes the road back to the mountain, to his bright hovel in the mountain village, alone.

'Hazro, did you live well in your village?'

'On our cliffs?' and he falls silent.

'Oh, dear youth, how you flew away...' And again he picks up his flute.

This time he plays not the song of the highlanders' courage that makes one's blood boil, but a distinct shepherd's song. There is both melancholy in that song, as if someone has gotten lost in deep valleys and is sobbing sadly, and spirited happiness, as when the sun shines on the mountains, smoke rises, and the farmer goes to work. Finally, it has strains of both homesickness and of return and final hopes.

'I would like to see our rocks, our valleys, our high Maruta mountain again; to take my apricot flute, gather the people, sit on the sweet grass, let the lamblike people sit around me, play those peaceful songs of mine, for the good and loving people to embrace each other like brothers, for there to be neither master, nor servant, nor sword, nor violence; to blow in my apricot flute, for smoke to rise out of chimneys again, to drink from our clear springs, for my sweat to drop on our rocks, for our high mountain cloud to lick my white bones...'

'And, Hazro, to whom will you give your apricot flute?'

'I'll give my flute to my brave grandson.'

The street is quiet.

The exhausted people are sleeping and the city houses and their black windows sway in the light of the street lanterns. A freshness descends from the mountains onto the city and the night breeze brings with it the fra-

բերում է սուսամբարի բույրը, լեռների հստակ
օդը և մաքուր ջրերի ձայնը:

Ես գոցում եմ ուղևորության իմ տետրը, նրա
մեջ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր,
ինչպես հանգած մոխիր: Լեռների վրա
վրնջում է իմ ձին՝ ինչպես սանձարձակ ուրա-
խությունը, ինչպես սպիտակ ջրվեժը, որ
իջնում է բարձրերից, թափով կտրում դաշտը,
խառնվում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի
հետ գնում դեպի անեզր ծովը:

Չյանբերդ, Չյանբերդ...

Դու դառնում ես անպարտելի ամրոց, քո
բարձր լեռները զարթնել են, և քո լանջերին
հնչում են հաղթության երգերը:

Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և
նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար
երգերը:

1933

grance of marjoram, the crisp air of the
mountains, and the sound of clear water.

I close my journal with its two marjoram
leaves, dry and gray like extinguished ash.
My horse neighs on the mountains with un-
restrained bliss, like a white waterfall that
falls from the heights, slashing fields with a
crash, merging with a turbid river, and flo-
wing to a shoreless sea with other waters.

Dzyanberd, Dzyanberd...

You become an indestructible fortress. The
peaks of your high mountains have awoken
and the songs of victory reverberate on your
slopes.

A mighty apricot flute, without old fears and
with new revelry, gives voice to our fair
songs.

1933

[1] Azniv is a person's first name, but it also
means honest.

* **AKSEL BAKUNTS** (Alexander Stepani Te-
vosyan), born in Goris in 1899, was a writer,
journalist, and agronomist. In the early days
of the Soviet Union, he traveled around Ar-
menia as an agronomist and journalist wri-
ting short stories that reflected the condi-
tion of the people at that time. One of the gre-
ater themes that runs through much of his
writings is that of the hapless villager
caught between powers beyond his or her
control. Like many of his contemporaries,
Bakunts was arrested and executed by the
Stalinist regime in 1937. His works were
banned in Soviet Armenia until the 1960s.

** **NAIRI HAKHVERDI** is a translator and
lecturer. She teaches literary translation at
Yerevan State Linguistic University after V.
Brusov.